

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵՆԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ:

Թիֆլիսում գրվում են միայն խմբագրատան մէջ:

Պատրագրագրացիք դիմում են ուղղակի  
Tiflisa, Pedonaja „Mavka“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ  
(հացի կիրակի և տօն օրերից):

Հայտարարութիւն ընդունվում է ամէն շաբաթ:

Հայտարարութիւնների համար վճարում են  
խրաքանչիւր բառին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Կարող է սով վնաս: — Ներքին տեսու-  
թիւն: Նամակ Ջալալ-Օղլուց: Ներքին լուրեր:—  
Արտաքին տեսուչութիւն: Տրամախա:—Մշա-  
կի հեռագիրներ: Յայտարարութիւններ:— Բա-  
նասիրական: Եւրոպայի նիւթական հարստու-  
թիւնը:

ԿԱՐՈՂ Է ՍՈՎ ԼԻՆԵՆ

Ես տարի գրեթէ ամբողջ  
Եւրոպայի մասերը ոչնչաց-  
րել է ցանքերը: Եւրոպայ գաւառ-  
ները ամայի են դարձել... Դրժ-  
բաղդութիւնը մեծ է, կարող է  
ոչ թէ միայն սաստիկ թանգու-  
թիւն, բայց և սով լինել...

Ղշմարիտ է, լուր կայ որ կով-  
կասեան գլխաւոր վարչութիւնը  
արդէն պատուիրել է մեծ քա-  
նակութեամբ հաց Ռուսաստանի  
Եւրոպական մասում, բայց այնու-  
ամենայնիւ չէ կարելի չը խոստո-  
վանել որ մեր տեղական վար-  
չութիւնը պէտք է և ուրիշ աւելի  
ազդու միջոցներ գործ դնէր նոյն  
խի մորեկի դէմ, այդ սարսափելի  
միջատի երևալուն պէս:

Մենք առհասարակ միայն այն  
ժամանակ սկսում ենք մի բանի

վրա հոգալ երբ արդէն վտանգը  
ակնեւ է: Երբ ժամտախոր ար-  
դէն յայտնված է, այն ժամանակ  
միայն մենք ուղարկում ենք պաշ-  
տօնեաներին օտար երկիրները,  
կարանտինների կազմակերպութիւ-  
նը ուսումնասիրելու համար: Երբ  
մորեկը յայտնվեցաւ և արդէն  
անխնայ ոչնչացնում է արտերը,  
մենք նոր ենք սկսում ուսումնա-  
սիրել մորեկի ինչ լինելը, գրել  
գիտնական հետազոտութիւնները  
այդ կենդանու մասին և կարգալ  
մեր գրվածները ուսումնական ըն-  
կերութիւնների մէջ:

Եյն ինչ վատ չէր լինի, եթէ  
վաղուց ծանօթ լինէինք Եսիա-  
յում (Փոքր-Եսիայում, Արիա-  
յում և Պալեստինայում) գործ  
ածվող ժողովրդական և վարչա-  
կան միջոցների հետ մորեկը ոչն-  
չացնելու վերաբերութեամբ: Հէնց  
որ մորեկը յայտնվում է, խիցոյն  
հրամայվում է բնակիչներին, որ  
նրանցից իւրաքանչիւրը հաւաքի և  
բերի այսքան պուզ մորեկ, որի  
համար յայտնի վարձատրութիւն  
են ստանում, իսկ ով որ չէ բե-  
րում, տուգանք է վճարում: Եյդ  
հաւաքած մորեկը անվում է գետ-

նի մէջ փորված մեծ փոսերի մէջ  
խառն չը հանդցրած կրի հետ,—  
և միւս տարի այդ արդէն փո-  
շանման դարձած խառնուրդը  
ներկայացնում է գիւղացիների  
համար մի շատ ընտիր միջոց հո-  
ղերը պարարտացնելու համար:

Կան բաներ, որոնց մենք կա-  
րող ենք սովորել և տեղական  
կենսից: Եւրոպական գիտու-  
թիւնը ի հարկէ անհրաժեշտ է,  
բայց ուշ է արդէն գիտնական  
հետազոտութիւններ անել երբ  
վտանգը անխիստ է: Եյդ տե-  
սակ դիպուածներում պէտք է ոչ  
թէ ուսումնական ընկերութիւն-  
ների մէջ կարողացած գիտնական  
ճառերով զբաղվել այլ ձեռք  
տալ ազդու և խիստ գործնական  
միջոցներ:

Բայց մենք այդ չենք արել և  
այս տարի մեր երկրին, կրկնում  
ենք, ոչ թէ միայն առաջին հար-  
կաւորութեան մթերքի սաստիկ  
թանգութիւն է սպասում, բայց  
գուցէ և սով է սպանում մեր  
երկրին:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄՍԿ ՋԱՆԱՆ-ՕՂԻՈՒՑ

28 մայիսի

Շատ անգամ պատահած է ինձ կարգաւ ազգա-  
յին լրագիրներում թէ այս ինչ անձը կամ հա-  
սարակութիւնը մտադիր է դռնէ և կամ գոնեց  
այսքան ու այնքան գումար, այս ինչ կամ այն ինչ  
բարեգործութեան համար, և այնուհետև երկար  
ժամանակ նոյն լրագիրներ թերթերի մէջ չը տես-  
նելով նրանց իրագործման համար: Եւ մեկ անգո-  
կութիւն, երկարացուցած եմ թէ կամ այն լուրերը  
ճշմարիտ չեն եղած և կամ թէ որ և իցէ պատ-  
ճառով խանգարված ու գլուխ չին եկած, ուստի  
որպէս զի մեր Ջալալ-Օղլու ուսումնարանաց առ-  
թիւ ժողոված գումարների համար, որի մասին եր-  
կու անգամ դրած եմ ձեզ սրանից երկու ամիս ա-  
ռաջ, նոյն կարծիքները չունենան ուրիշներն, ահա  
գրեմ ձեզ դործի ինքնացը:

Մեր Ջալալ-Օղլու հասարակութիւնը, ինչպէս որ  
գրած էի առաջին նամակներում մէջ, ժողովելով իր  
մէջ առաւել քան տասն հազար ռուբլ, և օրիոր-  
դաց ուսումնարանի համար գնելով իսկ տղայոց ու-  
սումնարանի համար վարձելով յարեւր շինութիւնը,  
սպասում էր թե՛ տեղական տեսչին ուսումնարանները  
բանալու, և նրա ուշանալու պատճառով իմանա-  
լով, որ իր պաշտօնից հեռանալու է, ստիպեց ճոգա-  
բարձունքին ուսումնարանաց բացումն այլ ևս չը  
յետաձգել: Այստեղ մեր յարգելի հոգաբարձուքը  
հարկաւոր պատրաստութիւններն անելով յայտ-  
նեցին ժողովրդականաց, որ երկուսու ուսումնարա-  
նաց բացման հանդէսն կատարվելու է ամիս 15-ին,  
Հասաւ այն փախազելի օրը և Ջալալ-Օղլու հասա-  
րակութիւնը, արք և կանայք խառն բաղնիքեամբ  
դիմում էին դէպի սուրբ եկեղեցին ներկայ գրտն-  
վելու սուրբ պատարաղին և այնտեղից գնալու  
ուսումնարանը, տանելով իրանց հետ մայրերը  
աշակերտներին և հայրերը աշակերտներին:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐԹՈՒՄԻ ՆԻԹԱԿԱՆ ՀԱՐՍՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Գործարանական արուեստների մի այլ վերին  
աստիճանի անհրաժեշտ պայմանը երկաթն է, որը  
մարդկութեան պատմութեան մէջ այնպիսի մի մեծ  
դեր է խաղացել և խաղում է այժմ ևս, որ երեք  
չըջանի բաժանելով մարդկութեան անցեալը, երրոր-  
դը, որի մէջ այժմ մենք ապրում ենք, անուանել  
են երկաթեայ շրջան: Ընթացողը գիտէ, որ նա-  
խապատմական մարդիկը բանեցնում էին քարեայ  
գործիքներ, թէ քանակական կենսիկ և թէ պատե-  
րազմների համար, նրան այս մետաղները չէին ճա-  
նաչում: Երկրաբանները, գիտօգնելը, արդէն վա-  
ղուց սկսել են հետազոտութիւններ անել և արդէն  
շատ երկիրներում գտած են և գտնում են այժմ  
աւերակների մէջ քարեայ գործիքներ, որոնք պրո-  
թեանք պահվում են Եւրոպայի թանգարաններում:  
Քարին փոխարինեց անաղխառն պղինձը, բը-  
րձողը, որը տեղեց երկար դարեր մինչ երկաթի  
գիւտը, որով բացվում է արուեստների, ուրեմն և  
մարդկային կենսիկ համար մի նոր շրջան: Եւ իսկ,  
ոչ մի ուրիշ մետաղ չէ կարող փոխարինել երկա-  
թին իր արժեքով և արժանութեամբ: Թէպէտ  
և կան քանի մի մետաղներ, որոնք, ինչպէս օրի-

նակ լսնակին (պատին), բայց նրան այնպէս հա-  
ղուազիւս են և թանկագին, որ ոչ զքի իսկը չի  
զա նոցա այժման երկաթի նման գործածել: Եւ  
իսկ, այժմ անկարելի է երևակայել մի գործարան  
առանց երկաթի, բոլոր մեքենաները համարեն  
նրանից են շինված: Հէնց այդ բաւական է արդէն  
նորա մեծ նշանակութիւնը ցոյց տալու համար: Ո-  
րովհետև ինչ գործարան կարող է առանց մեքե-  
նայի գործել, իսկ մի լուսաւոր երկրում, երկաթը  
ոչ թէ միայն անհրաժեշտ է իր գործարանների  
համար մեքենաներ պատրաստելու, այլ և երկաթը  
ինքը դառնում է վաճառակաւութեան մի մեծ  
ճիւղ, ուստի և երկրի հարստութիւնների մի նշա-  
նաւոր մասը: Վերջէք Ասիայում, եթէ հայտնու-  
լինենք միայն այն երկաթը, որը երկրից արտահան-  
ված է այլ երկիրներ, կը տեսնենք որ նա ներ-  
կայացնում էր 1877 թիւն, մի ահաղին արժողու-  
թիւն, այն է մօտ 10 միլիոն ֆունտ ստերլինգ զա-  
նազան ձևերի երկաթներ, իսկ 6 1/2 միլիոնի մե-  
քենաներ միասին դա կանէ 16 1/2 միլիոն ֆ. ար-  
տերլինգ, որը կանէ մօտ հարիւր միլիոն ռուբլի:  
Բայց այս վերջի տարիներում երկաթին սկսել է  
փոխարինել պողպատը, որը մի և նոյն տարում  
արտահանած էր Անգլիայից աւելի քան քան մի-  
լիոն ֆ. ստերլինգ, այսինքն մօտ 130 միլիոն ռուբ-  
լու արժողութեամբ:—Ինչպիսի էլ ունի բաւականի  
երկաթեայ հանքեր, և նոյն տարում նա արտահա-  
նեց աւելի քան 45 միլիոն ֆունտի զանազան տե-  
սակի երկաթներ, և հասարակ նոյնքան գումարի  
էլ մեքենաներ:—Բայց որպէս միջոց Անգլիայի հետ  
երկաթի առևտուրով, դա զերմանիսն է: Միայն  
Պորտուգալի արդիւնաբերել էր 1873 թիւն, աւելի  
քան 56 միլիոն ռուբլու զանազան տեսակի եր-  
կաթներ (հում երկաթ, երկաթեայ նիւթ, ձողեր և  
այլն): Արդի պատճառով նա ընկել էր 1877-ին  
32 միլ. ռուբլու:

Ինչ կը վերաբերի Ռուսաստանին, երկաթի ար-  
դիւնաբերութիւնը այնտեղ դեռ շատ աննշան է:  
Ռուսաստանում հանքեր պակաս չեն դուրս հանար,  
միայն չը կայ կապիտալ, չը կայ գիտութիւն: Ան-  
ցեալ տարի թէ երկու տարի առաջ մի պարսի,  
Հիլօպի, զանախօտութիւնից երևում է, որ Ռու-  
սաստանը բանեցնում է իւրաքանչիւր տարի քան  
միլիոն պուզ երկաթ միայն երկաթուղիների նի-  
գերի համար (բէյա), իսկ երկրի արդիւնաբերու-  
թիւնը հաշվում էր նա ամենաշատը երկու միլիոն  
պուզ, նա հաշուում էր նաև, որ սկսած 1846-ից  
մինչ 1875 թիւը Ռուսաստանը երկաթի կարկի  
համար վճարել է արտահանման 911 1/2 միլիոն  
ռուբլի: Երկաթարած հարաւային Ռուսաստանում  
միայն երեք հատ երկաթեայ հանքեր կան, որոնք  
պատկանում են երեք անձերի:

Եթէ մենք փոքր ինչ երկար կանգնեցնենք երկա-  
թի և քարածուխի արդիւնաբերութեան վրա,  
այդ այն պատճառով էր, և ընթացողը արդէն  
գուշակած կը լինի այդ, որ դրան կազմում են  
այժման գործարանական կենսիկ մէջ մեծ և նը-  
շանաւոր երևոյթներ: Գործնով ի հարկէ մենք չենք  
ուզում ասել, որ զարգացած արուեստներ ունենա-  
լու համար հարկաւոր է անպատճառ դոցա հանքերը  
ունենալ նոյն իսկ երկրի մէջ: Ոչ, այդ սխալ կար-  
ծիք կը լինել. նոյն իսկ Եւրոպայում կան երկիրներ,  
որպէս օրինակ Զուիցերլանդ, ուր գործարանա-  
կան արուեստները ամենաազդած դրութեան մէջ  
են, չունենալով իրանց երկրի մէջ այդ մետաղները:  
Այդ կարելի է և դա ունի իր պատճառները այլ  
հանգամանքների մէջ, որոնց վրա խօսելը այստեղ  
դեռ ժամանակ չէ. մեր առածը միայն այն է, որ  
որտեղից ցանկաբ, բերել տուէք թէ հարկաւոր է  
այդ մետաղների ունենալը. երկաթը անպատճառ,  
իսկ քարածուխը համարեն նոյնքան կարևոր է,  
եթէ ի նկատի առնենք սպորանքների արժանու-

թիւնը, որը միջազգային առևտուրի մէջ վճարու-  
կան դեր է խաղում:  
Շատերը գուցէ զարմանան, որ խօսելով մետաղ-  
ների վրա, մենք այնչ չափացնենք ոչ ոսկու և ոչ  
արծաթի մասին, որպէս երկրի հարստութիւններ:  
Ի հարկէ մենք խօսեցինք այն մետաղների վրա,  
որոնք ունեն ուղղակի յարաբերութիւն դէպի գոր-  
ծարանական արուեստները. բայց և այնպէս, ինչու  
մենք խօսելով երկրների հարստութիւնների վրա,  
մի առանձին ուշադրութիւն չը դարձրինք ոսկու և  
արծաթի վրա. չէ որ դոցանով է որ չափում են,  
նոցանով է որ խմանում են բոլոր գները, բոլոր  
կայքերը, վերջապէս թէ անձնական թէ ճառա-  
բակային բոլոր կարողութիւնները, հարստութիւն-  
ները: Ոչ, Եւրոպայում էլ կային ժամանակներ, երբ  
երկրի բոլոր հարստութիւնները չափում էին միայն  
երկրի մէջ գտնվող ոսկու և արծաթի քանակու-  
թեամբ: Այդպէս դեռ կարծում են շատ մարդիկ:  
այդ կարծիքը տարածված է նաև մեղսներում, այդ  
սխալ լինելով հարկաւոր է նորան վանել և մեր  
հասարակութիւնից և հանազանէ ճշմարտութիւնը:  
Իսկ ճշմարտութիւնը որն է: Չունենալով ոչ տեղ  
և ոչ ժամանակ այդ աւարկայի վրա խօսել ըստ  
արժանոյն, աշխատենք ներկայացնել այդ ճըշ-  
մարտութիւններից մի քանիսը, որոնք պարզ են և  
հասարակ, և որոնց իսկութիւնը պիտի ոչ մի քաղա-  
քանտես չէ կասկածում:—Իւրաքանչիւր իր հարս-  
տութիւն է, երբ ունէ արժողութիւն, իսկ այդ ար-  
ժողութիւնը մարդու համար պիտի հասկանալ: Այդ  
իրը ուղղակի կարող է ծառայել մարդու պիտոյք-  
ներին ուսելիք, խմելիք, շորեղէն և այլն, կամ թէ  
կողմնակի կերպով, օրինակ խոտը, որ անասուն-  
ների կերակուր է, բայց ունի արժողութիւն, զի  
այդ անասունը կրկին մարդու համար է և նորա  
պիտոյքներին պիտի ծառայէ: Գործնից կարող ենք  
ուրեմն հետևացնել, որ երկու երկիրներից նա աւելի

յամբ 11-ին պատարագը աւարտելէն յետոյ, եկեղեցական դասը, որի գլխին կանգնած էր Լօռու բարեկարգ—գործակատար Յակոբ քահանայ Շահինեանց՝ իրեն ներկայացուցիչ հոգևոր խնամակալութեան կողմանէ, զգեստաւորեալ և խաչուաճառեր պարզած դիմացին խուռն բազմութեան հետ դէպի ուսումնարանները բակը. նախ օրհնեցին օրհորդաց և ապա տղայոց ուսումնարանները. այնտեղից ուսումնարանաց բակը դուրս գալով հանդիսաւոր թափօր անելուց յետոյ սկսան ճառախօսութիւններ, նախ խոսիլ քահանայ Արամեանց, յետոյ հոգաբարձունքին մէկը և վերջը տեսուչն, այն է պ. Տ. Տէր-Վաթիկեանցը, որ ազդու և համոզիչ կերպով թէ՛ տղայոց և թէ՛ մանաւորապէս օրհորդաց ուսանի կարևորութիւնը բացատրելէն յետոյ վերջացրեց իր ճառը հետեւեալ խօսքերով, «վերջապէս տիրակալ և պարոնայք, մեր նախնիքը, ժամանակի պահանջման համեմատ անգուժ թունակներն և թշնամիներն խիստ ու անտանելի նեղութիւններն դէմ, տոկոսն համբերութեամբ, չը խնայեցին իրանց պաշտելի արիւնը, պաշտպանեցին ու մեզ հասցրին մեր սուրբ կրօնն ու լեզուն, իսկ այժմ մնում է մեզ ժամանակիս պահանջման համեմատ ուսման և գիտութեամբ մեր ազգութիւնը և կրօնը պաշտպանել և մեր որդեցն աւանդել, ուրեմն մի խնայէք և դուք ձեր կօպէկները այս ազգաչն գործի համար»:

Ճառախօսութիւնները վերջնապէս յետոյ՝ բոլոր հրաւիրեալները, մօտ 200 հոգի արք. և կանայք, բազմաթիւ փառաւոր սեղանի վրա, որ մեկնած էր ուսումնարանի պարտէզի խիտ ծառերի տակ. զբաղուեցին գունդի նուագածոնների խումբը օրվայ գեղեցկութեան հետ իրանց քաղցր եղանակներով մեծ շքեղութիւն և ոգի էր տալիս հանդիսին: Վատարկվեցան կենաց բաժաններ, առաջ բերող ոտքի վրա կանգնած խմբին Նորին Մեծութեան Ալէքսանդր կայսեր կենացը, որոյ համար նուագածոք հնչեցին «Տէր պահես զմեր արքայ», յետոյ Նորին Մեծութեան յառաջնորդ կայսերութեան, փոխարքային և փոխարքայի, Վեհապետ. Հայրապետի, և թիֆլիսի առաջնորդի և այլոց: Հայր տեւեց մինչև երեք ժամ և մեր բազմակամները նոր—նոր մտքեր յայտնելով և լսելով ուսումնարանաց յառաջադիմութեան և յարատևութեան համար ուղարկ և դուարթ երեկոցեան դէմ ցրվեցան իրանց աները. այն օրվայ տեսարանն լուսանկարով վերցվեցաւ. որի մէկ օրինակը ձեռք կը բերեմ և կուղարկեմ ձեզ, պ. խմբագիր: Երկրորդ օրը ուսումնարանի ընդունելութեան սենեակում շարժվելու տեղ չը կար, այն օրն ընդունվեցան 60 աշակերտներ և 30 աշակերտուհիք. իսկ մինչև զայսօր հասել է աշակերտաց թիւը 100-ին և աշակերտուհեաց թիւը 50-ի: Աւսումն գեղեցիկ կերպով շարունակվում է. ունենք առ այժմ երեք ուսուցիչ և մէկ վարժուհի:

Լօռու շինական պաշտօնակատարները հաղի

հաղ այս տարի փոխվեցան և նորերը ընտրվեցան. այս անգամ Չալալօղլուցի հասկանալով, որ տգէտ տանուտէրից միշտ իրանց օգտի փոխարէն մնալ կը հասնէ, ընտրեցին տանուտէր ուսումնարանի հոգաբարձու Սարգիս Տէր-Գրիգորեանցին, որպէս ուսումնարանաց օգտին և յառաջադիմութեանը ևս հոգաց, որովհետև լսած են շատ տեղերից, որ տանուտէրները շատ անգամ ուսումնարանաց հակառակ են գործում՝ և այն հասարակական օգուտները, որ պէտք է ուսումնարանաց յատկացնել, իրանց զրապանները ձգում. մենք մեծապէս ենք, որ պ. Տէր-Գրիգորեանցը ժողովրդականաց յայտնի դերն չի հանի:

Չալալօղլու բոլոր արուեստաւորները մօտ ութսուն հոգի, տեսնելով գիւղացոց միւս մասերի շարժելը, իրանք ևս չը կամեցան յետ մնալ ուսանի 20-ին մեծ հացկերպով տալով ժողովրդականաց, կազմեցին իրանց մէջ արհեստաւորաց համբար, ընտրեցին արհեստապետ, նորան օգնականներ և գանձապահ. նորա ևս իրանց մէջ պայման կապեցին, որ իրանց մէջ տուգանք և կողմնակի արդիւնք թէ՛ ժողովի, երկեսու ուսումնարանաց յատկացնելի որպէս զի աղքատ արհեստաւորաց որդիքը այնտեղ այն հաշով սովորեն:

Մտացայ ասել, որ ուսումնարանաց բացման հանդիսի օրը մի քանի պարոններ դարձեալ նուիրատուութիւններ արին ոմանք 50 և ոմանք 100 բուբը: Լսում ենք հաւատարմաբար, որ Չալալօղլուցի պ. Սահակ Սահակեանցը խոստացել է իր ուսումնարանի ամուսնու հետ միասին նուիրել Չալալօղլու երկեսու ուսումնարաններին 1400 բուբը պէս զի նորա տոկոսով որք տղայք և աղջիկներ ուսանին. նոյնպէս մտադիր է Չալալօղլուցի այրի Վարդիկին Աղլինեանցը իր վաղամուտ որդոց, այն է Մնացականի և Գրիգորի միջատակը անուսնացնելու համար, նուիրել մեր ուսումնարանաց մէկ զուարթ կամ կայսածք, որպէս զի դարձեալ որք երեխայք ուսանին նորա տոկոսով: Այս վերջին երկու ապագայ նուիրատուաց համար իր ժամանակին կը խօսեմ, միայն նամակիս հետ ուղարկում եմ մինչև ցայժմ նուիրատուաց ցուցակը և խնդրում եմ առանձին թիւրքի վրա տպագրելով ուղարկէք ձեր բոլոր բաժանորդներին ի խախտութիւն նուիրատուաց և յօրինակ այլոց: Սրա մասին ուղարկում եմ ընդ ամին քան բուբը: Այս տարի Լօռու զարմանալի եղանակներ է անում, որպէս անձրևները նոյնպէս և տաքութիւնը կանոնաւոր և չափաւոր է, մարգագետինները և արտերը մեղ առատ հաց և առատ խոտ են խոտաւորում: Ղազախի գաւառի թիւրքերը արդէն սկսել են սարերումը իրանց հայրենի արհեստը՝ գործնու խեղճ գիւղականների անասունները և զրկողութիւններ հասցնել Լօռու սահմանակից հայերին

Լօռեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վ. ԱԳՈՒԽՈՒՑ հարդրում են, թէ պ. պ. Տէր Միքէլեանց եղբայրները որպէս 8000 բուբը իրանց հարստութիւնից յօգուտ Ագուլիսի դպրոցներին, և այս գումարը պէտք է շահեցնեն իրանց առևտրական գործերում, որի տոկոսով մշտապէս երկու աշակերտներ պէտք է պարտատվին վարժապետացուք տեղային դպրոցների համար: Մէկը արդէն Ներսիսեան դպրոցում սովորում է, իսկ միւսը շուտով կուղարկուի վարժապետացուցիչ պէտք է ընտրվին Ագուլիսի դպրոցները շքաւոր և ընդունակ աշակերտներից, և նրանց կը պարտաւորացնեն, ուսումը աւարտելուց յետոյ, մի քանի որպէս տարիներ վարժապետական պաշտօն վարել տեղային դպրոցներում: Ի նկատի ունելով այն բոլոր դժուարութիւնները, որով ազգուցիկը անկարող են լինում օրինաւոր վարժապետներ ունենալ, —մեծ համակրութեան արժանի է պ. պ. Տէր-Միքէլեանց եղբայրների այս բարեբարութիւնը:

Նոյն տեղից հարդրում են, թէ պ. պ. Տէր Միքէլեանց եղբայրները ընծայեցին յօգուտ Ագուլիսի աղքատների համար կազմված հոգաբարձութեան 300 բուբը: Իսկ տիկինները՝ Քազուհի և Աննան Արասխանեանցները ընծայեցին նոյն հիմնարկութեանը իւրաքանչիւրը 100 բուբը:

Նոյն տեղից հարդրում են, թէ ազգուցիկը այս տարի իրանց հոգաբարձուների ընտրութեան մէջ բոլորովին խաղալիկ շինեցին դպրոցների գործը: Ընտրվեցան այնպիսի մարդիկ, որոնք ամենին ընդունակ չէին այս պաշտօնին: Ահա անունները. մէկը պ. Շահագրեանցը, որ դպրոցի նշանակութիւնը չէ հասկանում: Միւսը, տանուտէր պ. Կոստանտինեանցը, որ աւելի դարձեալ է իր ճանապարհի այցելութիւններով... և երբէք դպրոցների վրա մտածելու ժամանակ չը պիտի ունենայ: Երրորդ, Սաշա Տէր-Մկրտչեանը, որ, որպէս անչափահաս տղայ, դու ինքը ինամակներին (ապեկուններին) հակողութեան ներքոյ է, իսկ դպրոցների մասնութների հոգաբարձութիւնը նրան յանձնեցին:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՐԱՆՍԻԱ

Այս վերջին օրերս Վերայլում մի ժողով կայացաւ. այդ օրը ժողովրդի բազմութեանը

ար. այն է՝ վաղվայ ժամանակներում փոքր հազարաւոր բան էր. այսօր, ենթացողով որ մեր հաւաքաբարձութիւնը մեծ առաջադիմութիւնն է՝ արեւ, մեր գիւղերում նոյնքան ձու կը ստանան իրանց հաւերից, որքան այն դժբաղ ծերունին. ինչ և իցէ այսօր հինգ կօպէկով հարիւր ձու չէք աւելի. ձուերի քանակութիւնը մնալով համարեա մի և նոյն, փոքր ուրեմն պիտի կորցրած լինի իր առաջնուց գինը, որովհետև միտալի քանակութիւնը աւելացած է:

Ինչու համար ևս բերլի այս օրինակները. ցոյց տալու համար, որ ոսկու և արծաթի քանակութիւնը աւելացնելով սխալ կը լինի կարծել թէ երկիրը հարստացաւ աւելացածի չափ. նա կը հարստանայ, որովհետև այդ մետաղների մէջ հասարակութիւնը կարօտութիւն ունի. բայց այդ կարիքը պիտի հասարակութեան համար շատ մեծ չէ: Գիտե՞ք աշխարհիս ամենահարուստ երկիրը՝ Անգլիան, որքան ոսկի և արծաթ ունի իր երկրի մէջ և որքան նրանից աւելի աղքատ Ֆրանսիան. իմացէ՞ք. առաջինը ունի մօտ 3 միլլիարդ ֆրանկ, իսկ երկրորդը՝ հաշուում են մօտ 8 1/2 միլլիարդ ֆրանկ. Չամազանութիւնը, ինչպէս տեսնում էք, շատ մեծ է: Ինչո՞րեմ ընթացողովին չեղբակացնել այս տողերից թէ ոսկին կամ արծաթը բանք են. այդ մի շատ հետաքրքրիչ հարց է, որի հետ կը զբաղվենք գուցէ մի ժամանակ. այս անգամ մենք ցանկացանք ասել և ապացուցանել ընթացողին, որ ոսկին և արծաթը չեն բաժնու երկրի հարստութիւնների մէջ այն, նրանաւոր տեղը, որին յատկացնում են գո՞ո՞ծին անտեղիս և անհմուտ անձերը: Որպէս զի մի անգամայն վերջացնելը այս անգամ այդ առարկայի մասին, աւելացնելը, որ Ֆրանսիայի բոլոր ունեցած հարստութիւնները հաշուում են 150—200 միլլիարդ, իսկ Անգլիայինը 200—250 միլլիարդ ֆրանկ. վերեր յիշեցնելը թէ այդ

չափ ու սահման չը կար. կարծես ամբողջ փարիզը փոխադրված լինէր այդտեղ: Կրկնապատան այն էր, որ առաջինը այդ օրը Բուլոնեան անասուում ձիարշաւ կար, և երկրորդ հաստատ չը գիտէին թէ այդ օրը Վամբէտտան պէտք է նախագահէ թէ չհետևապէս ժողովուրդը, կարծելով թէ Վամբէտտայի նախագահութեան ներքոյ նշանաւոր հռետորներ ամբիտն կը բարձրանան ուստի նա էլ օգուտ քաղելով օդի գեղեցկութիւնից և տարածութեան փոքրութիւնից գնացել էր Վերայլ: Բայց զժբողապէս Վամբէտտան մի քանի օր առաջ գնացել էր Սկաէր. և այդ պատճառով էլ մի քանի շաբաթներ հաւատացնում էին, որ Վամբէտտան նրա համար էր հեռացել Փարիզից, որովհետև նա չէր կամենում կանգնել իր ապագայ հաւակորդ Վլեմինսօի հանդէպը, որը այդ օրը առաջին անգամ էր մասնակցում ժողովին:

Ժողովուրդը իր յոյսերի մէջ խաբվեցաւ և նրանցից շատերը բոլորովին զղջում էին թիւնու թողեցին Բուլոնեան ձիարշաւը: Ս. քանի օրվայից յետոյ սկսվեցաւ ժողովը. կէ մասնուն մի ահագին ճառ ասաց: Ժողովի մեկնանքը եւ էր գալի: Ամբոխի բազմութիւն էլ մի առանձին շնորհ էր տալի պատկանելի ժողովին:

Այդ օրվայ ճառախօսներից ամենից շատ քաջ հանդիսացաւ պ. Մարիէ—Սոնժօ, որ ամենանուանդուն կերպով խօսում էր Բլանկի հրաժարեցնելու մասին: Բայցի այն որ պահանջարկը ձեռք մեծ նշանակութիւն ունեցաւ ընդհանուր հարցի վճելու մասին, մի կողմից էլ դա նշանաւոր էր իր բուն հռետորական պերճախօսութեամբ: Այժմեան սերունդը միայն զանազան պատմութիւններով գիտէ այն տեղեկութիւնները, որոնք այնքան վառվառն զոյնելով են նկարագրում Վանտոն ու Ալգրու Բոլէիի պէս կրակոտ հռետորներին, որոնց ազդու խօսքերը 1848 թւական պարլամենտի ամբիտնի օյմն ու զարդն էին կազմում: Այդ օրվայ ժողովում Տերուն Մարիէ—Սոնժօ մի գեղեցիկ օրինակ տուե վաղեմի առասպելական պերճախօսութեան ժողովի բազմութիւնը նրան անընդհատ ծափահարութիւններ էր ուղղում. իսկ երբ նա ամբիտնից ցած իջաւ, նրա բարեկամները քիմնաց, որ նրան խեղդէին իրանց զրկախառնութեան մէջ: «Voilà un vieux lion de 1848»

հարուստ է, որը կարողանում է՝ իր ունեցածով աւելի բաւականութիւն տալ հասարակութեան պիտոյններին: Գործակց պարզ ոչինչ չէ կարող լինել: Այժմ ինչ է ոսկին և արծաթը: Գոքա իրեր են, որոնք նշանակված են բաւականացնել մարդուս յայտնի պիտոյնները: Բայց ինչ պիտոյններ է լըբացնում օրինակ ոսկին: Նա ծառայում է որպէս զարդ, որպէս պերճութիւն. բացի դորանից, ոսկին և արծաթը ծառայում են որպէս գնելի չափ, այսինքն որպէս փող, դրամ: Ուրեմն ինչ է փողը եթէ ոչ մի ապրանք, մի ապրանք, նախ և առաջ, որը կարող է փոխել իր արժողութիւնը, որպէս բոլոր միւս ապրանքների ցորենը, գինին, մետաղը և այլն: Ինչ օրէնքի որ ենթարկում են բոլոր միւս առարկաները, նոյն օրէնքին ևս ենթարկվում է ոսկէ և արծաթեայ փողը. իսկ այդ առաջարկութեան և պահանջի օրէնքն է, այսինքն՝ մի ապրանք թանգ է, երբ նորա համար պահանջը մեծ է, իսկ առաջարկութիւնը փոքր, և ընդհակառակը՝ նա արժան է, երբ առաջարկութիւնը աւել է, քան պահանջը: Մի և նոյնը պատահում է ոսկու կամ արծաթի հետ. եթէ այս փողին, մինչ այժմ դեռ անպայտ հանք, գան են մի երկրում և այն այնպիսի մեծ հանք որը տասը տարում, դիցուք, կրկնապատկէր ոսկու այժմեան քանակութիւնը, հետևանքը կը լինի այն, և այդ դժուար չէ գուշակել, իմանալով քաղաքատնտեսական այն մեծ օրէնքը, որ տասը տարից յետ ոսկին կը կորցնի իր արժողութիւնը կիսով չափ, (որոս համար հարկաւոր է ենթադրել, որ բոլոր միւս առարկաների քանակութիւնը մի և նոյնը պիտի մնայ): Կիսով չափ իր արժողութիւնը կը կորցնի, դա կը նշանակի, որ եթէ մի բուբը լիով դիցուք այժմ մի պուղ ցորեն էք առնում, տասը տարից յետ, երբ իւրաքանչիւրը կուենայ երկու անգամ աւելի մեծ քանակութիւն ոսկի, մի բուբը լիով դուք կանոնէք

միայն կէս պուղ. ուրիշ խօսքերով մէկ պուղը այն ժամանակ կարծեսայ երկու բուբը:—Մենք այդ ասացինք միայն օրինակի համար. բայց չը կարծէք, թէ այդ օրինակը միանգամայն երևակայական է. ոչ. Եւրոպան տեսած է այս դարումս գների մի մեծ յեղափոխութիւն, որը սկսվեց 1848 թուականին, երբ պատահամբ, ոսկէ հանքերի հարուստ Ղերբ գտան Կալիֆօրնիայում, յետոյ Աւստրալիայում: Վախենալով ընդհանր մեծ թվերի մէջ, որոնց հայ ընթերցողը դեռ սովոր չէ, ասենք միայն, որ ամենահեղինակաւոր մասնագէտների հետազոտութեամբ, որպէս հուկէ և այլերը, դուրս է գալիս, որ մինչ այդ հանքերի գտնվելը, այսինքն 1848-ին, ամբողջ աշխարհում կար 34 միլլիարդ ոսկի: Այսօր հաշուում են այդ քանակութիւնը մօտ 50 միլլիարդ ֆրանկ ոսկի (միլլիարդը—1000 միլլիոն): Եւ իսկպէս, հանքերի գտնելուց յետ այլ ապրանքները թանգացան բաւականի, որովհետև ոսկին կորցրել էր իր առաջնայ արժողութիւնը: Յետոյ սկսեց նա թանգանալ, որովհետև այլ արուեստները, զանազան գիւտերի պատճառով, ստացան մեծ զարգացում և սկսեցին իրանք էլ արժանանալ, որի հետևանքն էր միջնորդային վառաւակնութեան բարձրանալը. ոսկին կրկին սկսեց դառնալ հազուադէպ, ուրեմն նա պիտի բարձրացնէր իր արժողութիւնը: Առանց Եւրոպային դիմելու, միթէ մեր հայերից իւրաքանչիւրը չէ կարող հասարակ բանքեր իր երկրի պատմութիւնից վերցնել. ինձ պատմում էին, և այդ շատերին յայտնի է, թէ գիւղի գերեզմանաքարերից մէկի վրա ննջեցաւ մահուանից առաջ փորել էր այսպիսի մի վերնազգիր. «Թող ապագայում մարդիկ մտաբերեն և յիշեն ինձ. ինձ, որը դատապարտված էի մի մեծ գերդատուն պահել, երբ հինգ կօպէկով հարիւր ձուց աւելի չէր կարելի գնելը: Ճշմարիտ է այդ զրոյցը թէ ոչ, դրա մէջ կայ ճշմարտութեան գուն մի մա-

rugit» սասց մի ծերունի լրագրաստ, որը անյայտ ժամանակներէ ի վեր հետեւում է իր հայրենիքի քաղաքականութեանը:

Կէսմասի ճառը, որ սկսեց ուղիղ ժամը 2-ին, լինէր էր սովորական, և բոլոր ժամանակ աշխատում էր սարսուղանել, որ ժողովը իրաւունք ունի հաստատել ու վաւերացնել Բլանկի ընտրութիւնը. չը նայելով, որ այս վերջինը զբիւրեմ է քաղաքական իրաւունքներից, այնու ամենայնիւ, ասում էր սովորական հետադարձ, որ ժողովից է կախած օրինակը, որը չը նայելով այն հրովարտակին, որի գործութեամբ բնասարտեան բոլոր ընտանիքը սքոտրված էր համարվում, այնու ամենայնիւ 1848 թւի ազգային ժողովի վճռով իշխանի ընտրութիւնը օրինակը համարվեց: Յետոյ ճառախօսը աւելացրեց, որ ի՞նչ այս օրինակը բաւական է, 1871 թւի Բորգոի ժողովն էլ վճռեց Օրլանսի իշխանների ընտրութիւնը:

Առհասարակ Կէսմասի ճառը շատ պաղ ընդունելութիւն գտաւ: Նա զեռ չէր վերջացրել իր ճառը, երբ ժողովի անդամները արդէն էլ ուշադրութիւն չէին դարձնում նրա վրա. և ժողովի բոլոր արամադրութիւնից կարելի էր պարզ եզրակացնել, որ Բլանկի ընտրութիւնը ոչինչ յնարհէտ չի գտնի:

Կէսմասից յետոյ ամբիոնը բարձրացաւ հերցոգ Լարոշմուկո-Ռիլլանսի (մի սաստիկ նեղ հասկացողութեան տեր պարոն) և հարցրեց արգարութեան միտարարին, թէ ճշմարիտ է արդե՞ք, որ միտարարութիւնը խորհրդակցել է ծայրայեղ ձախակողմեանների անդամների հետ, և խոստացել է, որ ի՞նչ Բլանկի ընտրութիւնը չը վաւերացվի, նրան պէտք է թողութիւն շնորհվի յունիսի 3-ից առաջ, որպէս զի այդ շնորհը ընդհանուր թողութեան հաշուում լինի:

Պ. Լորէյէ, իր սովորութեան համեմատ, պատասխանելու ժամանակ փոքր ինչ տարացաւ, և մի քանի անգոյշ խօսքերով մի այնպիսի փոթորիկ բարձրացրեց ժողովում, որի նմանը Վերայրը երբէք տեսած չէ: Թէ ինչ ազդուկ բարձրացրեց Լորէյէի յանդուրձան խօսքերը մենք դրա մասին երկար ու բարակ

չենք խօսի, միայն հարեանցի կերպով կը նշուի, որ Պոլ-Վաստանակ իր մի քանի բնասարտական կուսակիցներին հետ մեծ ազմունքներ ու անկարգութիւններ արին. նախազահի անդադար լուծեան հրաւիրելը պարզիւն մնացին: Նարունակ 20 բուլեւարդ ժողովը բարեյոնեան խառնակութեան էր նամանում:

Արգարութեան միտարարից յետոյ ամբիոնը բարձրացաւ Ռոբէրտ-Միտլին, որը իր ճառի եզրակացութեան մէջ ասաց. «Մեզ—միապետականներին—համար, բոլորովին մի և նոյնն է կրնորեն Բլանկի թէ ոչ, բայց ես հակառակ եմ, որ օրէնքը օգուտ քաղելով իր ոյժից կամենում է նրան պատժել, միայն նրա համար, որովհետեւ նա հոկտեմբերի 31-ին, հետեւելով ընդհանուր շարժմանը, կամեցաւ ապստամբվել»:

Կապէս արդէն ասացինք այդ օրվայ ճառախօսների մէջ ամենից նշանաւոր հանդիսացաւ պ. Մարկէ-Մոնտօ. մենք մի առ մի չենք թւի նրա ասածները, բայց մենք անհրաժեշտ ենք համարում մէջ բերել նրա վերջին այն խօսքերը, որոնք այնքան հիացման ու այնքան ջերմ ծափահարութիւնների առիթ եղան. նա վերջացնելով իր ճառը, խօսքը դարձրեց դէպի Կէսմաս, և ասաց:

«Ռոբէյը—և այս ասում է ձեզ այն մարդը, որը թէպէտ և ձեզնից լաւ չէ պատերազմել արգարութեան համար, բայց որը շնորհակալ լինելով իր հասակի առաւելութեանը, զոնէ ձեզնից առաջ է պատերազմել (ծափահարութիւններ), և այսպէս օրէնքը—վահան և սուր է. (ծափահարութիւններ): Այս վահանով կարելի է պաշտպանվել coup d'Etat-ի (պետական հարուած) դէմ, եթէ այդ լինելը նոյն իսկ զեկտեմբերի 2-ին (ազազակ աջակողմը): Կամ եթէ ոչ, զոնէ այդ սրով, ինչպէս մենք արինք, կարելի է գէթ վեճ առնել: (Տառ լաւ): Եթէ միտարարները վատ կատարեն օրէնքը, այս սրով կարելի է նրանց ստիպել աւելի լաւ վարվել: Նա կրկնում եմ, օրէնքը վահան և սուր է. ես չեմ կամենում բաժանվել նրանից: (Վերջանուր ծափահարութիւններ):»

Պուէտարութեան ժամանակ, որը սկսվեց պ. Մարկէ-Մոնտօի ճառից յետոյ, յոգուտ Բլանկի միայն 33 ձայն ստացվեցան, որոնք

միջոց վեցը պատկանում են բնասարտականներին: Բոլոր հանրապետականները, 27 ձայներով բացառութեամբ, սե քուէներ ձգեցին: Աջակողմեանները չէզոք մնացին:

Նա այսպէս երկրորդ անգամ էլ Բլանկին չընտրվեցաւ, և այս անգամ ժողովի վճռով մշտական թաղից Բլանկիին հարցը:

Նորբուն կարինէսի անդամները մի ժողով կազմեցին, որտեղ միայն մաքային ցուցակին վերաբերեալ մի քանի հարցերով զբաղվեցան, և որոնց մասին պ. Տիրար բաւական երկար բացատրութիւններ տուեց: Այնտեղ միտարարների մէջ համաձայնութիւն կայացաւ, որպէս զի այնպէս անեն, որ կարելի եղածին չափ շուտ քուէարկին մաքային ցուցակի վերանորոգութիւնները:

Ներքին գործերի միտարար խորհրդին հարցրեց օրէնքի ծրագրի այն մի քանի մասնաբաժանութիւնները, որոնք վերաբերում են քաղաքային խորհրդարանի նոր կազմակերպութեանը:

Ձախակողմեանները շուտով կը գումարվին մշտական արժուների համար կանդիդատներ որոշելու:

Յունիսի 6-ին առաւօտը, միտարարները ժողովեցան Ելիսեան պալատում: Ժողովը վճռեց թողութիւն շնորհել Բլանկիին միայն մի քանի օրից յետոյ:

Միտարարների խորհրդարանը այդ օրը չը զբաղվեց ժողովների Փարիզ վերադառնալու հարցով: Պ. Լը Բուայէ այս առիթով մի օրէնք է պատրաստում, որը շուտով կը ներկայացվի այն յանձնաժողովին, որը նշանակված է քննելու Պէյրաի առաջարկութիւնը:

**«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒԱԳԻՐՆԵՐ**

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՆՑ

1870 թ, 6 յունիսի, կէսօրից յետոյ ժամը 2. 10 րոպէ: Գանձարանում գողացված է 1,700,000 րուբլոց աւելի. բացի այդ գողացված են անցավթղթի և ծխախոտի բլանկներ, լամիչքի մի պատնետ, և այնպիսի բլանկներ, որոնք ծառայում են զենուորագրութեան հրաւիրելու: Այն եօթմ անուկներից, որոնք

պէս և, պիտի ասած, իր մանրամասնութիւնների մէջ մարդ շատ անգամ կարող է սխալվել: Եթէ երկրի կամ մի նահանգի գործուհեութիւնը միմիայն երկաթուղիների երկարութեամբ չափելու լինէր: Բայց ընդհանուր կերպով վերցրած, դա մտաւորապէս ճիշդ է, և այդ հանգամանքում միշտ պիտի, ի հարկէ, երկու տարածութիւն էլ ի նկատի առած: Երկաթուղային գծերի վրա ճիշդ գաղափար տալու համար, մենք ստիպված ենք այստեղ քանի մի թւեր առաջ բերել: Երկրի տարածութեան համեմատ, ամենից շատ երկաթուղիներ ունի Բելգիան, այն է՝ 3,500 կիլոմետր կոյտ թւով. (10 կիլոմետրը 2/3 միլետր): Բելգիայից յետ գալիս է Անգլիան որը ունի մօտ 18,000 կիլոմետր. դորանից յետ Գերմանիան, ունենալով 17,000 կ., Գերմանիայից յետ գալիս է Ֆրանսիան, որը ունի 21,000 կ.: Գոցանից յետ գալիս են միւս երկիրները, որոնց մի առ մի յիշելը աւելորդ է. միայն թէ չը մոռանանք Ռուսաստանը իր նամանակ մօտ 21,000 կիլոմետր երկաթուղային գծերով, որը, երկրի տարածութեան համեմատ, համարեա վերջին տեղին է բռնում Եւրոպայում:—Եւրոպայում տարից տարի երկաթուղիները աւելանում են. Ֆրանսիայում, օրինակ, անցեալ տարի հասարակաց շինութիւնների միտարար Ֆրէյսինէ պահանջեց պարլամենտից չորս միլիարդ ֆրանկի կրեդիտ, որից մի միլիարդ պիտի գործ դնէ նոր ջրանցքներ շինելու, իսկ երեք միլիարդը նոր երկաթուղիների բացելու համար, որոնց երկարութիւնը պիտի տարածվի 15 հազար կիլոմետր: Ի հարկէ, ամենայն ժամանակ և ամեն երկրում չէ կարելի այդ ամտիմանի առաջին ձեւնարկութիւններ անել, որովհետեւ դրա համար հարկաւոր է Ֆրանսիայի նման հարուստ և կրեդիտ ունեցող երկիր. բայց ամեն երկրում այդ կողմից կայ յաւաքայիմութիւն:

ներկայացնում երկաթուղիները, որովհետեւ, ինչպէս ձեռ յայտնի է, երկաթուղին արժան է նստում. բայց եթէ ծախսը շատ է, միւս կողմից արդիւնքը մեծ է: Գա մի շատ հետաքրքրելի հարց է և յոյս ունեն ընթերցողին էլ իմ կարծիքի է. ուրեմն փոքր կնչ զբաղվեք այդ խնդրով:—Երկաթեայ ուղիներ շինելու ծախսերը՝ կարող են ի հարկէ զանազան լինել զանազան ժամանակներում և այլ հանգամանքներում, բայց մի գաղափար տալու համար ասենք միայն, որ Պրուսիայում շինած երկաթուղիները, ինչպէս մասնագէտները հաշուում են, նստած են միջին թւով 550 հազար թաղեր գերմանական միտնի վրա, այնպէս մի վերստի վրա 70 հազար թուրք, իսկ ինչ կը վերաբերի արդիւնքին, դա հաշվում էր մի և նոյն երկրում միջին թւով 1873-ին տասն և մէկ հազար թուրք. դուրս հանելով տարեկան բոլոր ծախսերը, երկաթուղիները տուին 6% դուտ արդիւնք իբրև կապիտալի շահ:

Այստեղ պարզեք ենք համարում նաև անուշադիր չը թողնել մի կէտ, որը փոքր զեր չէ խաբում մեզ զբաղեցնող առարկայի մէջ. այդ զինուորական, կամ աւելի լաւ տասն՝ պատերազմական հարցն է: Եւրոպական բոլոր տէրութիւնները երկաթուղային գծեր շինելիս բացի առևտրական շահերը միշտ ի նկատի է ունեցել և պատերազմական հաշիւներ. շատ դիպուածներում կարելի է մինչև անգամ այնպիսի, որ պատերազմական հաշիւներն են, որոնք պայմանաւորել են այս կամ այն գծի անցնելը: Վերջէք, օրինակ, Ռուսաստանը. պարզութեան համար վերցրէք մինչև անգամ կովկասը, ուր առ այժմ կայ դեռ մի հաս երկաթուղային գիծ Փոթի-Փիֆլիսեանը. եթէ լաւ հետեւէք այն համապարօք, որտեղով անցնում է այդ երկաթուղին, կը գտնէք որ այդ գործի մէջ առևտրական շահեր միանգամայն գոհած են. իբրև սպառող, վերցրէք հենց Քուկայիսը, որը երկա-

պատկանում են պետական բանկին, կտրված են երեքը, որոնց մէջ ամենից աւելի փող կար. միւս անուկները, որոնց մէջ պարտնակված էին բանկին, գանձարանին և գանազան հիմնարկութիւններին պատկանեալ փողեր, անարատ են մնացել, և նրանցից ոչինչ չէ վերցված: Կտրուած արդիւնքից յափշտակված է հինգ և երեք րուբլիանոց թղթադրամներ, տոկոսաբեր թղթեր և կուպոններ: Մոտաբարպէս մայիսի 24-ին գանձարանի կողքին գտնված Կոմիտի տունը մի տիկին բնակարան վարձեց. տիկնոջ անունը Նիկիտա տիկն էր և ինքն ասում էր որ բժշկի կին է. նա ունէր Մարիամ անունով մի աղախին և մի ծծի երեխայ. նրանց մօտ կան երկու որմնադիրներ բնակարանի մէջ նորոգութիւններ անելու: Յունիսի 4-ին երկու շաբթի և կիրակի օրերը սովորաբար չեն մտնում գանձարանի մթերանոցը (КЛАДОВАЯ): Առաւօտեան 10 ժամին, գողութեան յայտնվելուց յետոյ, վերոյիշեալ մարդկերանցից ոչ ոք չէր եկաց. նրանց բնակարանում այրված հագուստի մեկը աւել ոչինչ չը կար: Գետինը փորված է Նիկիտաի նայի խոհանոցից, որից մինչև մթերանոցը 7 1/2 սաճէն տարածութիւն է: Գետնի մակերևոյթից սկսած մի սաճէն աւելի խորութեամբ մի գետնափոր անցք է փորված, որի բարձրութիւնը և լայնութիւնը մի-մի սաճէն տարածութիւն ունի: Փորված հողը գլխի է տանիքի և խոհանոցի մէջ. օդ ստանալու համար միջի սենակում մի օդանցոյց խողովակ է շինված, որը միանալով վտարանի օդանցոյցի հետ, դուրս է գնում դէպի դուռը: Վերջին անգամ Նիկիտային տեսել են յունիսի 3-ին, կէսօրից յետոյ ժամը մօտ 2-ին: Ցան դռնապանը կայանաւորված է դեռ ոչինչ հետքեր չեն երևում: Սաստիկ միջոցներ են գործ դնում հետք գտնելու:

1870 թ, 6 յունիսի, երեկոյեան 10 ժամին: Գանձարանից փողեր յափշտակող յանցաւորը կայանաւորված է: Նրա մօտ մէկ միլիոնից աւելի փող գտնվեցաւ:

**Մարագիր-Ջրատարակող ԳԻՒԳՈՒ ԱՐՄՐՈՒՆԻ**

էր, որ առաջին անգամ շոգեկառքը—լօկոմոտիւր—չինեց, որը կրկին մի անգլիացի է: Եւ այսպէս, առաջի երկաթուղին շինվեց Անգլիայում Լիւերպոլի և Մանչեստերի մէջ, 15 սեպտեմբերի 1830: Միւս տէրութիւններից Գերմանիան էր, ուր 1835 թ.աւանդին առաջի անգամ երկաթուղի շինվեց, այն է՝ Նիւրբերգի և Ֆրայտի մէջ: Ֆրանսիայում առաջի երկաթուղին բացվեց 1837-ին Փարիզի և նորա մօտիկ Սեն-Ժերմենի մէջ, յետոյ գալիս են միւս տէրութիւնները. Աւստրիա 1838 թ., Չուէյերիա 1844 թ. և այլն:

Աւելի լաւ զգույս համար, թէ երկաթուղին ինչ փոփոխութիւն է արել արագութեան մէջ, համեմատենք նորան զինքնասի հետ: Եւ դորա համար վերցնենք Ֆրանսիան իբրև օրինակ. այնտեղ վաղուցվայ զինքնասիները, ինչպէս մեզնում տրոյկաները, անում էին միջին թւով 10 կիլոմետր մի ժամկայ մէջ, իսկ երկաթուղին այժմ գնում է միջին թւով 40 կիլոմետր. (մենք չենք խօսում անգլիական երկաթուղիների մասին, ուր շատ տեղերում երկաթուղին գնում է 60—70 կիլոմետր մի ժամում): Այն ևս պիտի չը մոռացած, որ առանց երկաթուղիների, որոնք շատ արժան են, այժմանի չափ շատ ճանապարհորդներ չէին կարող գտնվել: Բայց զիտէք Ֆրանսիայում որքան հասարակորդներ են հաշվում տարեկան: Երկու հարիւր միլիոն: Այլ խօսքերով, այդքան ճանապարհորդները, եթէ գլխիմաններով գնային, նոյն տարածութիւնը անցնելու համար հարկաւոր են քանի մի հազար տարիներ:

ПОТИ-ТИФЛИССКАЯ ЖЕЛѢЗНАЯ ДОРОГА
ОБЪЯВЛЕНИЕ

Съ 9 Апрелья будутъ въ движение товаропассажирскіе поѣзда: № 5 отъ Поти до Тифлиса и № 6 отъ Тифлиса до Поти по нижеслѣдующему росписанію.

Table with 6 columns: Station, Arrival, Departure, Station, Arrival, Departure. It lists routes between Poti and Tiflis with specific times and days.

Пассажирскіе поѣзда: № 1 изъ Поти и № 2 изъ Тифлиса, а также товаропассажирскіе поѣзда № 7 изъ Сурама № 8 изъ Тифлиса будутъ въ движеніи по прежнимъ росписаніямъ.

Удѣляя имъ право... (Notice regarding railway regulations and station operations, mentioning various stations and routes.)

ар այն անձինքներին, որոնք կը բռնվեն առանց վկայականների կամ անցագրի... (Notice regarding passport requirements and travel regulations.)

Театральная зала въ галлерей Арпуни окончена и отдается въ наймы подъ спектакли и концерты. Тамъ-же отдаются въ наймы и магазины.

ДВОЙНАЯ ИТАЛАНСКАЯ БУХГАЛТЕРІЯ

ՄԻ ԵՐԻՏԱՍԱՐԴ տալիս է ՀԱՇՈՒՍԱԳԱՆՈՒԹԵԱՆ դասեր (բանկի, ֆարիկի, ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԿՕՄՄԻՍԻՆԵՐԻ, երկաթուղու և այլն) հարցանելի և ֆինանսների գրաստանը կամ դիմել Քիֆ-լիսի Կազմակերպությանը...

ԲԱՐՁՐ ՈՒՍՈՒՄ ՍՏԱՅԱԾ ՄԻ ՕՖԻՑԵՐ, որ օտար լեզուներ էլ գիտելի, ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է աշակերտներին ՁԻՆՈՒՄԱՆ և ՔԱՂԱՎԱՆՈՒՄ զինագրաստների և պրոֆեսիոնալների համար: ՎՃԱՐԸ ԶԱՓԱԿՈՒ Է: Հասցեն կարելի է թողնել «Մշակի» խմբագրատանը կամ անցնել Արտիկրիկայա փողոց, տուն № 14.

Ա Մ Ա Ր Ա Յ Ի Ն ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Ամսաթվի արձակուրդների ժամանակ պարագայի ցանկացողներուն ընդունում և պատրաստում են թէ որ և է դպրոց մտնելու և թէ վերաբերում էան համար: Պարագանքը կը սկսուի յունիսի 11-ին և կը վերջանայ օգոստոսի 20-ին: Պարագի ցանկացողները կարող են դիմել «Տարական դպրոց» վեկամիսուկի փողոցը պ. Իշխան Ամատունու տանը № 11.

ԿԻՐԱԿԻ յունիսի 10-ին Գոգչիբուա եղբայրների Քիֆլիսում գտնված ՅԻՎԻ մէջ մի քանի յայտնի ԳԻՄՆԱՍՏԵՆԵՐ և ԿԼՈՒՆԵՆԵՐ ՊԱՆՅՈՒՆ առաջնորդութեամբ մի ներկայացումն կը տան: Այդ խումբի մէջն է Քիֆլիսի հասարակութեանը յայտնի Վ.Ս.Ի վեց տարեկան զինաստր: Ներկայացումն ՍԿԻՐԵՆ է 8 1/2 Ժամ մին:

ՄԻ ԲԱՅՈՒՆԵՆ ԿԵՄՈՒՐՔԻ մօտ Օւրբալի տան մէջ գտնված Ն. Ա. ԳՕՄԱՐԱՅՎՈՒ «ՊԱՐՏԱՄՈՒՐԱԿՆԵՐԻ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ գրատու և պարտամուրհակով ՓՈՂ է տալիս, գրնում է առևտրական ՊԱՐՏԱԹՂԹԵՐ, ծախում է ներքին փոխառութեան ՏՈՍՍԱԿՆԵՐ վճարը մաս մաս ստանալով, կատարում է զանազան ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Մի և նոյն տեղը գտնվում է «ԽՈՐՀՐԴԱԿՑԵԼՈՒ ԵՒ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ» որտեղ կարելի է տեղեկութիւններ ստանալ «ԲԱՂԱՅՈՒՆ» «ԲՐՆԱԿԱՆ» և «ՆՈՒՆԻՏՐԱԿԱՆ» գործերի մասին: Գրասենակը ընդունում է քաղաքային գործերի կատարումն իր ծախսերով, քրէական գործերի պաշտպանութիւն և ամեն տեսակ ԳՐԱՄՈՐ ԵՇՆԱՍՏԵՆԵՐՆԵՐԻ ԿԵՍԵՐՈՒՄՆԵՐ: Ի նկատի ունենալ «ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐԻ» ունեցած չափազանց ՇԼՏ աշխատանքները ցանկացողները հրաւիրվում են ԸՆԿԵՐԱՆԵԼ: Ցանկացողները պէտք է յայտնեն մինչև յուլիսի 1-ը:

- Ներկայ 1879 թ.ի յուլիսի սկզբից, տէրութեան թոյլտուութեամբ, Քիֆլիսի մէջ հրատարակվում է առևտրական «ԿԱՅԿՅԵ» լրագրի չափով, քաղաքագրական շաբաթաթերթ «Մշակատան» և հայ լեզուներով հետևեալ պրոգրամով:
1) Գաղտնաբերական ժամանակագրութիւն.
2) Տեղական կենքի ուսումնասիրութիւն. թէ ստեղծական, թէ վիճակագրական ու թէ գիտական տեսական կողմերից:
3) Գրականութիւն. գիտութիւնների բոլոր ճիւղերի վերաբերութեամբ աշխատութիւններ. լինեն նրանք թարգմանութիւններ թէ ինքնուրոյնութիւններ: Բնագրատութիւն առևտրական և օտարազգի գրականութիւնների:
4) Բաղադրականութիւն. քաղաքական հայեացք և յօդուածներ միջազգային իրաւունքի հարցերի նկատմամբ:
5) Մանր լուրեր:
6) Մանաւոր յայտարարութիւններ:
«Մշակատան» շաբաթաթերթի տարեկան բաժանորդագիրը, Քիֆլիսում, առանց տուժ հասցնելու.
Տուն հասցնելով . . . . . 5 ռուբլ:
Ուսուցիչ զանազան քաղաքներ ղրկելով . . . . . 5 ռ. 50 կ.
Փոստային դաշնակցութեամբ ղրկելով արտասահման . . . . . 6 ռուբլ:
Ստորագրութիւնն ընդունվում է Քիֆլիսի կենտրոնական գրադաշնառանցում:
«Մշակատան» համար բոլոր նշանակելի նամակագրութիւնները, ինչպէս նաև պահանջները, օտարազգային քաղաքներ պիտի բարեհաճեն մինչև ուրիշ նոր յայտարարութիւն դուրս գալը ուղարկել ուղղակի «Մշակատան» լրագրի խմբագրին այս հասցեով: Գրիգորի Կեր-Մելիքետով, րեդատուր Գազէ, «Труды», въ Сололакахъ, на Сололацкой ул. у Вознесенской церкви возлѣ стараго моста въ Д. Михаила Галузцова подъ № 110.
Նիւթեր և անձակ յօդուածներ «Մշակատան» խմբագրութիւնը ընդունում է միմիայն և յատկապէս առևտրական և վաճառական լեզուներով:
Խմբագիր-հրատարակող Գրիգոր ՏԵՐ-ՄԵԼԻՔԵՏԵՆԵՆ:

Ներսիսեան հայոց Ազգային-հոգևոր դպրոցի աշակերտների տարեկան հարցաքննութիւնը լինելու է հետևեալ կարգաւ:

Table with 3 columns: Subject (Ամիս և ամսաթիւ), Questions (Գասատուններ), and Answers (Առարկաներ). It lists subjects like Arithmetic, Algebra, and Geometry with their respective question and answer counts.

I, II, III և IV դասատանց գրաւոր քննութիւնները լեզուներից և մատենատիրային լինելու են I և II դասա. ունց մէջ մայիսի 2-ին և 23-ին իսկ III և IV դասատանց մէջ մայիսի 24-ին, 25-ին և 27-ին: Հարցաքննութիւնը մինչև մայիսի 26 լինելու է զինի ճաշու 5) ժամից և այնուհետև առաւօտները 8 ժամից, իսկ պատրաստական դասատան քննութիւնները լինելու են նոյնպէս առաւօտները: Պաշտօնակատար տեսչի Արշակ Նահապետեան:

Երևանեան հրատարակի վրա ՔԱՄԱՄԵՆՎԻ կարավանարայի դէմուղէմը № 11. տան վերի յարկում վարձով տրվում է մէկ ԴԱՂԱՅԻՃ ծառայով, լաւ կարասիքով և առաւօտ-երեկո սամովարով, դահլիճը մի բալիօն ունի իր առաջ: Գինն է ամսական 40 ռուբլ: Բայց դահլիճը մի և նոյն տանը վարձով տրվում են նոյնպէս առանձին ՍԵՆՍԱԿՆԵՐ կարասիքով, ծառայով, սամովարով և լուսաւորութիւնով. այդ սենյակները ամսական արժէն 25, 20 և 15 ռուբլ: Այդ սենյակներում կարելի է նոյնպէս ընկերով բնակվել: Հարցնել մի և նոյն տան գրան առաջ միբզ ծախող ՅԱՎՈՎԻՆ: